2023, ՓԵՏՐՎԱՐ Բ, ԹԻՎ 4 (624)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Մեծ Պահքի առիթով

(20 փետրվարի 2023 թ.)

Սիրելինե՛ր,

Մուտք ենք գործում Մեծ պահքի շրջան: Այս ժամանակամիջոցը քրիստոնյայի կյանքում կարեւոր հանգրվան է սրբության ու կատարելության աստվածապատվեր ճանապարհին: Պահքի մեջ աղոթական խոկումներով, ինքնաքննությամբ ու երկնային շնորհների հայցով զորություն ենք ստանում ի կատար ածելու Քրիստոսի հորդորն ու պատգամը. «Արդ, կատարյա՛լ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. Ե 48): Կատարելության ուղին սկզբնավորվում է զղջումով ու ապաշխարությամբ, որոնցով սրբագրվում են մտքի, խոսքի եւ գործի սխալներն ու սայթաքումները: Հատկապես այս խորհրդավոր շրջանում ավետարանական առակի օրինակով (Ղուկ. ԺԵ 11–32) առ երկնավոր Հայր դառնալով՝ խնդրում ենք Տիրոջից զթությամբ ներել մեր մեղքերը, մաքուր սիրտ հաստատել մեզանում: Հայցում ենք լուսավորել մեր միտքը, ամրացնել մեր կամքը՝ ընթանալու տերունավանդ պատվիրաններով:

Պահեցողության այս շրջանում Հայրապետիս հորդորն է ու պատգամը՝ միմյանց հանդեպ լինել առավել հոգատար, ազնիվ ու հարգալից, բարությունն ու սերը դարձնել հիմք փոխհարաբերությունների եւ ամուր պահել նվիրումն ու հավատարմությունն առ Աստված, ազգն ու հայրենին: Մեր օրերում, երբ մեր հայրենիքն ու ժողովուրդը վիրավոր են մեզ պատուհասած պատերազմի արհավիրքներից, աղոթական կյանքով Աստծու հետ մշտական երկխոսության մեջ լինենք, զերծ մնանք ամեն չար ու վատ մտածումից ու գործից՝ միասնաբար նորոգելու համար հայրենական ու ազգային մեր կյանքը, դիմագրավելու մեր դեմ հառնած նեղություններին եւ մեր հարազատ երկիրը՝ Հայաստանն ու Արցախը դարձնելու «հույսի հայրենիք, լույսի հայրենիք»:

Աղոթենք, որ ամենակալն Աստված Իր ողորմությունն ու պահպանությունը տարածի աշխարհասփյուռ մեր ժողովրդի վրա, պարգեւի անվտանգ ու բարօր կյանք եւ խաղաղության մեջ պահի մեր երկիրը: Թող Փրկիչ մեր Տերն ընդունի մեր սրտերի խնդրանքն ու հայցը, արժանի դարձնի Իր կենսատու եւ փրկարար շնորհներին եւ զորացնի ամենքիս՝ Մեծ պահքի միջոցով հասնելու հուսառատ Սուրբ Հարության տոնին:

«Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն յԱստուծոյ ի Հօրէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Որդւոյն Հօր, ճշմարտութեամբ եւ սիրով եղիցին ընդ ձեզ» (Բ Յովհ. Գ), այսօր եւ միշտ. ամեն:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Փետրվարի 20-ին **Արցախցի երիտասարդներին**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Երեւանի բարձրագույն ուսումնական տարբեր հաստատություններում ուսանող արցախցի մի խումբ երիտասարդների:

Ուսանողները Նորին Սրբությանը ներկայացրեցին իրենց նախաձեռնությունները, որոնց նպատակն է մեկ անգամ եւս ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների եւ միջազգային կազմակերպությունների ուշադրությունը հրավիրել Բերձորի (Լաչինի) միջանցքի արգելափակման հետեւանքով Արցախում ստեղծված հումանիտար աղետի վրա:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր հայրական սերն ու օրհնությունը փոխանցելով երիտասարդ արցախցիներին, իր գնահատանքը բերեց նրանց՝ Արցախի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման գործում ներդրվող ջանքերի ու նախանձախնդիր ոգու դրսեւորման համար:

Նորին Սրբությունն արցախցի երիտասարդներին նաեւ տեղեկություններ փոխանցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից տարվող՝ արցախյան հիմնախնդրի լուծմանը, Լաչինի միջանցքի վերաբացմանն ու Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական հոգեւոր, մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ:

Փետրվարի 21-ին **Ֆրանսիայի նախկին վարչապետ Էդուարդ Ֆիլիպին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Հանրապետության նախկին վարչապետ եւ Հավրի քաղաքապետ Էդուարդ Ֆիլիպի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա էր նաեւ Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան տիկին Անն Լույոն:

Ողջունելով հյուրերի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունն իր երախտագիտությունը հայտնեց Ֆրանսիայի իշխանություններին 2020 թ. արցախյան պատերազմի ու հետպատերազմյան ծանր օրերին Հայաստանին եւ հայ ժողովրդին բերած աջակցության ու զորակցության համար: Անդրադառնալով տարածաշրջանում տիրող իրավիճակին՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր մտահոգությունը հայտնեց Ադրբեջանի ծավալապաշտական քաղաքականության, Բերձորի (Լաչինի) միջանցքի արգելափակման հետեւանքով Արցախում ստեղծված հումանիտար աղետի, Հայաստանի ինքնիշխան տարածքների բռնազավթումների, ինչպես նաեւ Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության անխթար պահպանման եւ գերիների վերադարձման խնդիրների առնչությամբ: Նորին Սրբությունը կարեւորեց միջազգային հանրության եւ կառույցների հստակ դիրքորոշումն ու գործուն ջանքերը՝ Ադրբեջանի որդեգրած դատապարտելի քաղաքականությունը կանխելու համար:

Հայոց Հայրապետը հույս հայտնեց, որ արցախյան հիմնախնդիրն արդար հանգուցալուծում կգտնի, ու տարածաշրջանում խաղաղություն կհաստատվի Ֆրանսիայի եւ բարեկամ երկրների աջակցությամբ, մեր ժողովրդի ամուր կամքով ու հավատքով:

Նորին Սրբությունը բարձր գնահատեց պարոն Էդուարդ Ֆիլիպի եւ նրա գլխավորած պատվիրակության անդամների ներդրած ջանքերն ի խնդիր արցախահայության ազատ ու անկախ կյանքի իրավունքի պաշտպանության:

Իր հերթին նախկին վարչապետն ընդգծեց, որ պատվիրակության այցը Հայաստան վերահաստատում է Ֆրանսիայի բարեկամական վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ: Պարոն Էդուարդ Ֆիլիպն անդրադարձավ նաեւ Եվրոպայի եւ ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդներում Ֆրանսիայի կողմից ձեռնարկվող քայլերին՝ ուղղված Հայաստանի առջեւ ծառացած խնդիրների հաղթահարմանը եւ ադրբեջանական ագրեսիայի դատապարտմանը: Էդուարդ Ֆիլիպը հավաստիացրեց, որ Ֆրանսիան կշարունակի ջանքեր գործադրել ի նպաստ տարածաշրջանում խաղաղության հաստատման: ➥ էջ 2

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

↩ էջ 1

Հայաստանում Կորեայի նորանշանակ դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց ՀՀ-ում Կորեայի Հանրապետության նորանշանակ դեսպան Չան Հո-Ջինին:

Նորին Սրբությունը, գոհունակությամբ արձանագրելով երկու երկրների միջեւ հարաբերությունների եւ փոխգործակցության ամրապնդումն ու զարգացումը, նորանշանակ դեսպանին մաղթեց արդյունավոր առաքելություն:

Հանդիպմանը Հայոց Հայրապետը դեսպանին ծանոթացրեց նաեւ Հայ Եկեղեցու պատմությանը եւ վերջինիս ունեցած առանձնահատուկ դերակատարությանը հայ ժողովրդի կյանքում:

Դեսպան Չան Հո-Ջինն ընդգծեց, որ իր համար մեծ պատիվ է դիվանագիտական առաքելություն իրականացնելը հարուստ մշակույթ, պատմություն եւ ավանդույթներ ունեցող Հայաստանում:

Դեսպանը հաստատեց, որ երկու երկրների միջեւ առկա են ջերմ հարաբերություններ, որոնց արդյունքում ձեւավորվել է փոխգործակցություն մի շարք ոլորտներում եւ միջազգային հարթակներում:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով առաջացած հումանիտար աղետին, հետպատերազմյա մարտահրավերներին, ինչպես նաեւ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական հոգեւոր ու պատմամշակութային ժառանգության պահպանության խնդիրներին:

Եվրախորհրդարանի պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրախորհրդարանի ֆրանսիացի պատգամավորներ, ԵԽ-ում Արցախի հետ բարեկամության խմբի համանախագահներ Սիլվի Գիյոմիի եւ Ֆրանսուա Ալֆոնսի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՅԴ Հայ դատի եվրոպական գրասենյակի նախագահ Գասպար Կարապետյանի:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Հայրապետն իր գնահատանքը բերեց խորհրդարանականներին արցախյան հիմնահարցի խաղաղ կարգավորման գործում ներդրած ջանքերի համար: Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը հայտնեց ՀՅԴ Հայ դատի եվրոպական գրասենյակին՝ եվրոպական տարբեր կառույցներում արցախահայության խնդիրների մասին հետեւողականորեն բարձրաձայնելու եւ ազատ ու անկախ ապրելու արդար իրավունքը պաշտպանելու համար:

Վեհափառ Հայրապետը, հյուրերին ներկայացնելով տարածաշրջանում տիրող փխրուն իրավիճակը եւ ի մասնավորի Լաչինի միջանցքի արգելափակման պատճառով Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամը, անդրադարձավ այս առնչությամբ միջազգային հանրությունից հայ ժողովրդի ակնկալություններին: Նորին Սրբությունը նկատեց, որ Ադրբեջանի՝ տարածաշրջանն ապակայունացնող ծավալապաշտական քաղաքականությունը հնարավոր է կանխել բարեկամ երկրների զորակցությամբ եւ միջազգային հանրության հստակ դիրքորոշմամբ:

Զրույցի ընթացքում ԵԽ պատգամավորները, դատապարտելով ադրբեջանական ոտնձգությունները պատերազմի եւ հետպատերազմյան շրջանում, Նորին Սրբությանը վստահեցրին, որ շարունակելու են եվրոպական կառույցներում իրենց աջակցությունն ու զորակցությունը բերել Հայաստանին եւ արցախահայությանը:

Փետրվարի 22-ին **ՀՀ-ում Չեխիայի նորանշանակ դեսպանին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Չեխիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Պետր Պիրունչիկին:

Հայոց Հայրապետը, իր օրհնությունը բերելով դեսպանին, մաղթեց բեղմնավոր ու արդյունավետ առաքելություն: Գոհունակությամբ փաստելով երկու երկրների բարեկամական սերտ հարաբերություններն ու գործակցությունը՝ Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ դրանք կլինեն շարունակական եւ բարի արդյունք կապահովեն երկու ժողովուրդների համար: Հայոց Հայրապետն ընդգծեց, որ հայ-չեխական կապերի առավել ամրապնդման գործում նաեւ իր կարեւոր նպաստն է բերում Չեխիայի հայ համայնքը: Այս առիթով Հայոց Հայրապետը, ի դեմս դեսպանի, իր գնահատանքը փոխանցեց Չեխիայի իշխանություններին եւ Կաթոլիկ Եկեղեցուն հայ համայնքի հանդեպ դրսեւորվող ջերմ եւ հոգատար վերաբերմունքի համար:

Նորանշանակ դեսպան Պետր Պիրունչիկը, շնորհակալություն հայտնելով բարեմաղթանքների համար, Նորին Սրբությանը վստահեցրեց, որ իր ներդրումը կբերի հայ-չեխական փոխհարաբերությունների առավել զորացման ու զարգացման գործում:

Հանդիպմանը նաեւ անդրադարձ կատարվեց տարածաշրջանում առկա իրավիճակին, Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառացած անվտանգային եւ գոյաբանական հիմնախնդիրներին, պատերազմի աղետալի հետեւանքների հաղթահարմանն ուղղված քայլերին: Այս առնչությամբ Ամենայն Հայոց Հայրապետը ողջունեց միջազգային կառույցների եւ բարեկամ երկրների ջանքերը՝ ի խնդիր տարածաշրջանում խաղաղության եւ կայունության վերահաստատման՝ կարեւորելով նաեւ միջնորդական շարունակական ջանքերն Ադրբեջանում մինչ օրս պահվող հայ գերիների վերադարձման համար:

Իր հերթին դեսպան Պետր Պիրունչիկը հաստատեց, որ Չեխիան զորակցում է Եվրամիության՝ տարածաշրջանում խաղաղության հաստատման ջանքերին, եւ պատրաստակամություն հայտնեց աջակցելու գերիների վերադարձման հարցում:

Փետրվարի 28-ին **ՀՀ-ում ԱՄՆ նորանշանակ դեսպանին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Քրիստինա Քվինին:

Նորին Սրբությունն իր շնորհավորանքն ու արդյունավոր առաքելության մաղթանքը հղեց դեսպանին:

Ամենայն Հայոց Հայրապետը, ի դեմս ԱՄՆ դեսպանի, իր շնորհակալությունը հայտնեց Միացյալ Նահանգների իշխանություններին մեր երկրին ու ժողովրդին ցուցաբերած զորակցության եւ տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ուղղված ջանքերի համար:

Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառացած անվտանգային հիմնախնդիրներին, Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումներին՝ Հայաստանի ինքնիշխան տարածքների բռնազավթմանը՝ հույս հայտնելով, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները գործուն քայլեր կձեռնարկեն Ադրբեջանի նմանօրինակ քաղաքականությունը զսպելու եւ արցախահայության ինքնորոշման իրավունքը պաշտպանելու համար: Հայոց Հայրապետը մասնավորապես ընդգծեց գերության մեջ հայտնված հայորդիների ազատ արձակման կարեւորությունը:

Զրուցակիցները քննարկեցին նաեւ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանման խնդիրները, սրբավայրերի պղծման եւ ոչնչացման փաստագրված միջադեպերը:

Իր հերթին դեսպան Քրիստինա Քվինը, Նորին Սրբությանը շնորհակալություն հայտնելով բարեմաղթանքների համար, վստահեցրեց, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները եւ անձամբ ինքը կշարունակեն իրենց ջանքերը տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հաստատման ուղղությամբ:

Քահանայից հավաք Մայր Աթոռում

Փետրվարի 17-ին՝ Սրբոց Ղեւոնդյանց եւ Վարդանանց տոների առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ քահանայից հավաք, որին մասնակցեցին Հայաստանի տարբեր թեմերից 231 եկեղեցական, թեմական առաջնորդներ եւ Մայր Աթոռի միաբաններ:

Այս առիթով Արմավիրի թեմի Ս. Աստվածածին եկեղեցում (ք. Էջմիածին) Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց սուրբ եւ անմահ պատարագ:

Պատարագիչն էր Կոտայքի թեմի Չարենցավան քաղաքի Ս. Փրկիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Համազասպ քհն. Հագեյանը:

Իր քարոզում տեր հայրն ի մասնավորի նշեց. «Վարդանանց եւ Ղեւոնդյանց խորհուրդը նման է ճառագայթի, որն սկզբնավորվել եւ չի ավարտվում, այն շարունակվում է մինչեւ մեր օրերը: Այն մեր ազգային ինքնության եւ պահպանման, քրիստոնեական մեր հավատքի նկատմամբ հավատարմության եւ հայրենիքի հզորացման ու շենացման սրբազան առաքելությունն ու ընթացքն է»:

Տեր Համազասպն իրավամբ ընդգծեց, որ այսօր եւս Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին շարունակում է հավատարիմ մնալ Ղեւոնդյանց պատգամին, ինչի վառ վկայությունն է արցախյան վերջին պատերազմին հոգեւորականների մասնակցությունը:

Սուրբ պատարագի ավարտին եկեղեցականաց դասը մեկտեղվեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, որտեղ կատարվեց պարգեւաբաշխություն:

Ներկաներին ողջունեց Շիրակի թեմի առաջնորդ եւ քահանայից հավաքի կազմակերպիչ հանձնախմբի պատասխանատու Տ. Միքայել արք. Աջապահյանը:

Այնուհետեւ տեղի ունեցավ ավանդական շնորհաբաշխությունը: Ի գնահատություն Հայոց Եկեղեցու անդաստանում երկարամյա վաստակի, հովվական նվիրյալ եւ արդյունավոր ծառայության՝ մի շարք եկեղեցականների շնորհվեց ավագ քահանայության պատիվ, ծաղկյա փիլոն եւ լանջախաչ կրելու իրավունք:

Ավագ քահանայության պատվի արժանացավ Կոտայքի թեմից Տ. Հովսեփ քհն. Ալեքսանյանը:

Ծաղկյա փիլոն կրելու իրավունք շնորհվեց Արագածոտնի թեմից Տ. Փառեն քհն. Առաքելյանին եւ Տ. Վրթանես քհն. Բաղալյանին:

Քահանայական լանջախաչ կրելու իրավունքի արժանացան Գուգարաց թեմից Տ. Արտավազդ քհն. Սիմոնյանը, Գեղարքունիքի թեմից՝ Տ. Դանիել քհն. Մկրտչյանը եւ Տ. Հարություն քհն. Հունանյանը, Շիրակի թեմից՝ Տ. Գարեգին քհն. Սարգսյանը, Արցախի թեմից՝ Տ. Սեպուհ քհն. Հակոբյանը, Տ. Հուսիկ քհն. Դոխոլյանը եւ Տ. Հովնան քհն. Հովհաննիսյանը, ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդությունից՝ Տ. Տրդատ քհն. Գեւորգյանը, Արագածոտնի թեմից՝ Տ. Մաղաքիա քհն. Գեւորգյանը, Վայոց ձորից՝ Տ. Ներսես քհն. Աշուղբաբյանը եւ Տ. Արամ քհն. Կարապետյանը, Սյունյաց թեմից՝ Տ. Տիգրան քհն. Հակոբյանը, Ուկրաինայի թեմից՝ Տ. Մամբրե քհն. Հմայակյանը եւ Տ. Արտաշես քհն. Հակոբյանը:

Շնորհաբաշխության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բերեց հոգեւորականաց դասին եւ շնորհավորեց վերջիններիս Սրբոց Ղեւոնդյանց եւ Վարդանանց տոների առիթով:

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կազմակերպվող ամենամյա այս հավաքներն առիթ են դարերի խորքից մեզ փոխանցված պատգամների վերարծարծման եւ տիրավանդ մեր առաքելության մեջ Սրբոց Ղեւոնդյանց եւ Վարդանանց ոգով ու հայրենասիրությամբ զորանալու համար....

Ազգային մեր ինքնության, մեր հավատի ու հոգեւոր արժեքների պահպանության, մեր պետականության, Արցախի մեր քույրերի եւ եղբայրների ազատ կյանքի իրավունքի պաշտպանության պայքարը մեր ժողովրդի համար դարձել է չընդհատվող, չավարտվող իրականություն: Հայաստանի եւ Արցախի շուրջ մտահոգիչ զարգացումները, ազգային եւ հայրենական կյանքում հառնած խնդիրները, արտաքին մարտահրավերներն այսօր էլ ազգն ու հայրենիքը կանգնեցրել են անվտանգային, գոյաբանական լուրջ խնդիրների առջեւ, ինչպես Սրբոց Վարդանանց ժամանակներում»,— արձանագրեց Վեհափառ Հայրապետը՝ նկատելով, որ ստեղծված դժվարին իրավիճակը հայ ժողովուրդը կարող է հաղթահարել իր հավատքի զորությամբ, ամուր կամքով, միասնական ջանքերով եւ մշտապես առ Աստված ապավինությամբ:



Հայոց Հայրապետը, կարեւորելով առկա մարտահրավերների պայմաններում հոգեւոր դասի տերունապատվեր առաքելության մեջ ջանքերի ու ծառայության առավել արդյունավորումը, հատկապես կրթական-քարոզչական ոլորտում, ընդգծեց. *«Մեծապես կարեւոր է մարդկանց սրտերում հոգեւոր-բարոյական արժեքների սերմանումը, ազգային ոգու եւ հայրենասիրության զորացումը, քանզի ամենքիս մտահոգող արատավոր երեւույթներ եւ շատ հարցեր հիմնականում հետեւանք են արժեքային դաշտում արձանագրված նահանջի, ավանդական ընկալումների տկարացման: Կրթական տարբեր ծրագրերով, նաեւ արդի տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններով պետք է զորացնենք քարոզչությունը՝ ամրապնդելու հավատքը, հույսը եւ սերը մեր ժողովրդի՝ Աստվածաշնչի ուսուցմամբ եւ մեր Սուրբ Եկեղեցու ամբողջական ճանաչողությամբ»*:

44-օրյա պատերազմի հետեւանքով ստեղծված մտահոգիչ իրավիճակում Նորին Սրբությունը կարեւորեց հովվական խնամքը հոգեւոր ու հոգեբանական զորակցության կարիք ունեցող առանձին խմբերի նկատմամբ. *«Մասնավոր ուշադրություն հարկ է դարձնել զոհվածների, վիրավորների, գերեվարվածների եւ անհայտ կորածների ընտանիքներին, ինչպես նաեւ տեղահանված կամ Բերձորի (Լաչինի) փակ միջանցքի պայմաններում բաժանված արցախցի ընտանիքներին: Առաջնային մեր պարտավորություններից է նաեւ մանուկներին ու երիտասարդներին մեր Եկեղեցուն կապելը՝ Ավետարանի լույսով եւ մեր Սուրբ Եկեղեցու օրհնությամբ պաշտպանելու նրանց մերօրյա աշխարհի բազում մոլորություններից եւ գայթակղություններից»*:

Անդրադառնալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ հայաստանյան թեմերի՝ աշխարհասփյուռ եկեղեցական կառույցների եւ բարերար նվիրյալ հայորդիների աջակցությամբ վերջին տարիներին առավել ընդլայնված սոցիալական աշխատանքներին՝ Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց թեմական առաջնորդներին ու հովիվներին՝ կարեւոր այդ առաքելության մեջ դրսեւորած նախանձախնդրության համար:

Բարձր գնահատելով քահանա հայրերի նվիրյալ ծառայությունը՝ Հայոց Հայրապետը հորդորեց. *«Քրիստոսով զորացյալ քաջ, անվեհեր ու համարձակ եղեք ձեր հոգեւոր սպասավորության մեջ՝ ճշմարտության ճանապարհով առաջնորդելու մեր ժողովրդին՝ ի խնդիր հայրենական եւ ազգային մեր կյանքը խաթարող թյուր ընթացքների ու երեւույթների հաղթահարման: Ազգանվեր ու եկեղեցասեր ծառայությամբ եւ մշտարթուն հովվի աննկուն ոգով, իբրեւ մերօրյա ղեւոնդեղեցներ, շարունակեք ջանքեր ներդնել հանուն Հայոց Եկեղեցու պայծառության եւ մեր ժողովրդի հոգեւոր կյանքի բարօրության»*:

Ամենայն Հայոց Հայրապետը շնորհավորեց պարգեւների ու պատիվների արժանացած եկեղեցականներին՝ մաղթելով արդյունավետ ծառայություն ու նորանոր ձեռքբերումներ իրենց տերունապատվեր առաքելության մեջ:

Նորին Սրբությունը նաեւ տեղեկացրեց, որ տարիների վաստակաշատ նվիրյալ ծառայության բարձր գնահատանքով արքության պատվի են արժանանում Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային բաժնի տնօրեն Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը, Տավուշի թեմի առաջնորդ Տ. Բարգրատ եպս. Գալստանյանը եւ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը:

Վերջում իր գնահատանքը բերելով Հայ Եկեղեցու հոգեւոր դասին՝ Նորին Սրբությունը հայցեց, որ ամենողորմ Տերը խաղաղության եւ ապահովության մեջ պահի Հայաստանն ու Արցախը, շեն ու բարօր՝ հանուր հայության կյանքը:

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով

Փետրվարի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ մեկնարկեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով, ապա ԳՀԽ անդամներն Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ աղոթեցին 1988 թվականի փետրվարի 27—29-ը Սումգայիթում իրականացված ջարդերի զոհ հայորդիների հոգիների խաղաղության եւ հանգստության համար:

Այնուհետեւ Գերագույն հոգեւոր խորհրդի հոգեւորական եւ աշխարհական անդամներին իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նորին Սրբությունը ողջունեց նաեւ ԳՀԽ կազմում ընդգրկված նոր անդամներ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել արք. Աջապահյանին, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպս. Նալբանդյանին, Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանին, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Հովնան եպս. Հակոբյանին, ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ վրդ. Պարսամյանին եւ տիար Հայկ Իգնաթյանին:

Ժողովի օրակարգում ընդգրկված են ազգային, եկեղեցական-վարչական, կանոնական, կարգապահական, հայեցակարգային եւ Եկեղեցու առաքելության արդյունավորմանն առնչվող հարցեր: Քննարկման առարկա կդառնան Հայաստանում եւ Արցախում ստեղծված կացությունը, Եկեղեցու՝ առկա մարտահրավերների հաղթահարմանն ուղղված առաքելությունը, Մայր տաճարի օծման, մյուռոնօրհնության եւ հարակից այլ միջոցառումների կազմակերպման աշխատանքները:

Սուրբ Վարդանանց տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Փետրվարի 16-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սուրբ Վարդանանց տոնը: Այս առիթով, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռի միաբանությունը Ս. Գայանե վանքում մասնակցեց պատարագի սրբազան արարողությանը: Պատարագիչն էր Բալթյան երկրների հայոց թեմի առաջնորդ Տ. Վարդան եպս. Նավասարդյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ եւ հավատավոր հայորդիներ:

Իր քարոզում Վարդան սրբազանն անդրադարձավ Սուրբ Վարդանանց տոնի խորհրդին՝ մասնավորապես նշելով. «Ավարայրի ճակատամարտը մեր ազգի լինելության պայքարն էր.... Վարդանանց պատերազմը հավատքի ընտրության պատերազմն էր. ընտրեցինք հավատքի ճամփան, եւ այդ հավատքը մեզ միշտ օգնեց: Բազմաթիվ անգամներ մեզ չարչարեցին, Գողգոթայի ճամփով տարբեր փորձությունների ենթարկեցին, մեզ խաչեցին, սակայն հավիտենական կյանքի զորագլուխ Քրիստոսին ընտրելով՝ մենք հաղթեցինք, հառնեցինք, վերստին կյանքի կոչվեցինք, պայքարելու մեր ոգին նորոգեցինք եւ դարձյալ կանգնեցինք չարի կողմից եկող փորձությունների առջեւ»:

Սրբազան հայրն ընդգծեց, որ այսօր եւս անցնում ենք փորձությունների ճանապարհով, եւ այսօր էլ Վարդանանց պատերազմի ոգեշնչող պատգամն է հնչում՝ հիշեցնելով հանուն հավատքի կատարած մեր ընտրությունը:

Վարդան եպիսկոպոսը հորդորեց հավատացյալներին ընտրել հավատքի նորոգությունը եւ ընթանալ Վարդանանց նահատակների զորավոր պատգամի ճանապարհով:

Սրբազան հայրը նաեւ միաբանության ու ներկա հավատացյալ ժողովրդի անունից շնորհավորեց Վեհափառ Հայրապետին անվանակոչության օրվա կապակցությամբ:

Հավարտ սուրբ պատարագի, հանդիսապետությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանի, կատարվեց Հայրապետական մաղթանք: Եկեղեցականաց դասն ու ժողովուրդը միասնական աղոթք բարձրացրին առ Աստված Ամենայն Հայոց Կաթողիկոսության անսասանության, շենացման եւ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կենաց արեւշատության ու արգասաբեր հովվապետության համար:



Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Հայրենիքից հեռու՝ հայրենիքի հետ

Հարցազրույց ԱՄՆ Նյու Յորք քաղաքի Սրբոց Նահատակաց եկեղեցու հոգեւոր հովիվ եւ Ս. Հովհաննեսի անվան համալսարանի դասախոս, աստվածաբանության դոկտոր Տ. Աբրահամ քահանա Մալխասյանի հետ

— Տեր հայր, որքա՞ն ժամանակ է, որ Ձեր հոգեւոր սպասավորությունն իրականացնում եք հայրենիքից դուրս:

— Նախ շատ շնորհակալ եմ հարցազրույցի համար: Տիրոջ կամոք՝ 2011 թվականից հոգեւոր ծառայությունս եմ բերում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ԱՄՆ արեւելյան թեմում եւ ահա 10 տարի է՝ Նյու Յորքի Սրբոց Նահատակաց եկեղեցու հոգեւոր հովիվն եմ:

— Ի՞նչ խնդիրներ են ծառացած Սփյուռքում սպասավորող հայ հոգեւորականների առջեւ:

— Խնդիրները, ավելի ճիշտ՝ մարտահրավերները բազմազան են: Սփյուռքում սպասավորող հոգեւորականը երկկողմանի կարեւոր առաքելություն է իրականացնում: Նախ՝ դա նրա առաջնային կոչումն է, այսինքն՝ հոգեւոր հովվական ծառայություն է բերում իր ժողովրդին. քարոզում է, ուսուցանում, մխիթարում եւ մատուցում Եկեղեցու սուրբ խորհուրդները: Երկրորդ՝ նա կարեւորագույն այն կամուրջն է, որ կապ է հաստատում իր համայնքի եւ հայրենիքի միջեւ, այսինքն՝ ուսուցանում է հայոց լեզուն, պատմությունը, հաղորդակից դարձնում ազգային մշակույթին: Հետեւաբար, ընդհանուր առմամբ, ես լծված եմ վերոնշյալ ծառայությունների իրականացմանը: Եթե հարցնեք՝ դյուրի՞ն է, թե՞ դժվար, ապա, բնականաբար, պետք է պատասխանեմ՝ այո՛, դյուրին չէ, բայց հաճելի է, քանի որ գիտեմ՝ շատ անգամ թվում է, թե ապարդյուն է արածս, սակայն որոշ ժամանակ անց հասկանում եմ, որ ո՛չ, կարեւոր եւ արդյունավետ է:

— Հայտնի է, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին մշտապես եղել է Հայրենիք—Սփյուռք անքակտելի կապը, սփյուռքահայության շրջանում ազգային արժեքներն ու ինքնագիտակցությունը, հայկական մշակույթը պահպանողը. այս առումով ի՞նչ առաքելություն ունի Սփյուռքում ծառայող հայ հոգեւորականը:

— Հայ հոգեւորականն այն գլխավոր անձն է, որ Աստծու օրհնությամբ իրագործում է կարեւորագույն գործառույթ՝ միտված համայնքի հոգեւոր ու ազգային դաստիարակությանը եւ այդ արժեքների պահպանմանն ու հարատեւմանը: Փառք Աստծու՝ այսօր մեր սիրասուն հայրենիքն ունի դեսպանություններ բազմաթիվ երկրներում, այդ թվում նաեւ այստեղ՝ Միացյալ Նահանգներում. այնուամենայնիվ, այն, ինչ անում են Հայ Եկեղեցին եւ հոգեւորականը, պարզապես անուրանալի եւ ակնհայտ է: Հայ եկեղեցականը կրողն ու փոխանցողն է հայոց քրիստոնեական դարավոր հավատի, պատմական հիշողության՝ ի մասնավորի սուրբ պատարագի շարունակական խորհրդակատարությամբ, որ ավանդում է մեզ ոչ միայն Ս. Հաղորդության սրբարար խորհուրդը, այլ նաեւ դարերի խորքից եկած մեր բազմադարյա հոգեւոր փորձառությունը, ազգային զգացումներն ու գեղագիտական ճաշակը, լեզվամտածողությունն ու գաղափարաբանությունը:

— Ըստ Ձեզ՝ ո՞րն է Հայրենիք—Սփյուռք հարաբերության առանցքը:

— Հայրենիք—Սփյուռք հարաբերության առանցքը միմյանց ճանաչելն ու համագործակցելն է: Եւ սփյուռքահայերը, եւ հայաստանաբնակները պետք է ծանոթանան միմյանց առօրյային, իմանան միմյանց հաջողությունների եւ դժվարությունների մասին: Անհրաժեշտ է, որ սփյուռքահայերը տեղյակ լինեն նաեւ իրենց հայրենակից եղբայրների ձեռքբերումներից եւ խնդիրներից, ոչ միայն բավարարվեն դրամական օգնություն ուղարկելով, այլեւ հետամուտ լինեն գտնելու զանազան միջոցներ, որպեսզի ընկերային հարաբերությունների օգնությամբ իրենք իրենց ընկալելի դարձնեն եւ կարողանան առավելաբար ըմբռնել հայրենաբնակների մտածելակերպը: Անմիջական հարաբերությամբ է, որ Սփյուռքն ու հայրենաբնակ հայությունը կկարողանան միահյուսվել եւ աշխարհին ներկայանալ իբրեւ մեկ ու հավաքական ազգային միավոր:

— Ինչպե՞ս են իրականացվում հոգեւոր քարոզչությունն ու ազգային դաստիարակությունը Սփյուռքում. այս առումով ի՞նչ դերակատարում ունի Հայ Եկեղեցին սփյուռքահայ համայնքների կյանքում:

— Հոգեւոր քարոզչությունն ու ազգային դաստիարակությունն այստեղ իրականացվում են եկեղեցում սրբազան արարողությունների ընթացքում, հայկական դպրոցներում եւ տարաբնույթ միջոցառումների օգնությամբ: Մասնավորաբար մեր համայնքն օրհնված է երեք՝ կիրակնօրյա (կրոնական ուղղվածությամբ), շաբաթօրյա (հայոց լեզվի եւ պատմության մատուցմամբ) եւ ամենօրյա (ամերիկյան կրթական ծրագրին առընթեր՝ հայոց լեզվի ու պատմության դասաժամերի ներդրմամբ) դպրոցներով: Դժվար է պատկերացնել, թե այս դպրոցներն ինչպե՞ս պետք է կարողանային հարատեւել առանց մեր եկեղեցական հաստատության գոյության եւ հովանավորության: Դպրոցների սաները պարբերաբար հաճախում եւ մասնակցում են եկեղեցական տարբեր արարողությունների: Ի մասնավորի՝ հայերեն ընթերցում են Աստվածաշունչը, հաղորդակցվում մեր Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ Մարմնին եւ Արյանը, ունկնդրում օրվա խորհուրդն արտացոլող ու մեկնաբանող քարոզ-խրատը: Ես անձամբ այցելում եմ մեր դպրոցականներին եւ զրուցում նրանց հետ տարաբնույթ թեմաներով՝ ազգային ու եկեղեցական տոների եւ պատմական իրադարձությունների շուրջ, աստվածաշնչային պատումների ու պատգամների վերաբերյալ եւ այլն: Մեծապես գնահատում եմ մեր համայնքի այն անդամներին, որոնք անկեղծորեն արձանագրում են մեր Եկեղեցու կարեւորությունն ու անփոխարինելի ծառայությունը, որ մատուցվում է համայնքին: Շատերն իրավամբ ընդգծում են, որ եթե չլիներ տեղական եկեղեցին իր առընթեր կառույցներով, բազմաթիվ հայորդիներ վաղուց մոռացած կլինեին իրենց հավատի սկզբունքներն ու ավանդույթները եւ կդադարեին զգալ իրենց իբրեւ լիարժեք հայ քրիստոնյա եւ հայ մշակույթի կրող:



— Այսօր ի՞նչ միտումներ եք նկատում Հայրենիք—Սփյուռք հարաբերություններում:

— Սրբազան հավատի եւ բազմադարյա մշակույթի կրողն ու փոխանցողը լինելով՝ հայ հոգեւորականն այսօր ինքնաբերաբար կամրջում է հայրենիքն ու տեղական համայնքը՝ դարձնելով երկուսն իբրեւ մեկ ու անքակտելի մարմին: Այս գործընթացն առավել շոշափելի դարձնելու համար ես մեր համայնքում պարբերաբար հայտնում եմ հայրենիքից ստացված տեղեկությունները: Շատերը, անշուշտ, կարող են անձամբ լրատվությանը ծանոթանալ համացանցի միջոցով, սակայն իրականում բազմաթիվ սփյուռքահայեր այլ եւ այլ պատճառներով անհաղորդ են մնում եղելությանը, եւ այս առումով իմ ջանքերն օգտակար են լինում նրանց համար: Հայրենիք—Սփյուռք կապն առավել ամրապնդելու նպատակով կազմակերպում ենք նաեւ ուխտագնացություններ դեպի Հայաստան: Հայրենիք այցելելուց հետո նկատվում են սփյուռքահայ ուխտավորների հետաքրքրասիրության զգալի աճ եւ առավել ընդգրկված լինելու կամք ու ցանկություն: Անկեղծ փափագս է, անշուշտ, որ մեր չքնաղ հայրենիքի քաղաքացիներն առավել մեծ հնարավորություն ունենային ծանոթանալու իրենց արտասահմանաբնակ հայրենակիցների հույզերին ու հոգսերին: Հուսով աղոթում ենք, որ մոտ ապագայում, երբ մեր սուրբ երկիր Հայաստանի եւ Արցախի հանրապետությունները թեւակոխեն նոր ու պայծառ դարաշրջան՝ քրիստոսապաշտ եւ ազգանվեր առաջնորդներով ու զանազան բարեփոխումներով, համակարգված ծրագրի ներդրմամբ իրականություն դառնա Հայրենիք—Սփյուռք գործնական ու փոխկապակցված հարաբերությունը. Տէրն ընդ մեզ:

«Քրիստոնյա Հայաստան»

Հին եւ մեր օրերի Վարդանանք

Աստվածային սիրո մեծագույն դրսեւորումից՝ արարչագործությունից ի վեր մարդ էակը մշտապես հայտնվել է բարու եւ չարի, արդարի եւ անիրավի, կեղծի եւ ճշմարիտի ընտրության ճամփաբաժանին: Մաքառման այդպիսի մի ուղի էր վերապահված անցնելու նաեւ Վարդանանց քաջերին, որոնք Տղմուտ գետի ափին մոտ տասնհինգ դար առաջ ընտրեցին բարին՝ հակառակ չարի, հավատարմությունը՝ ուրացության փոխարեն, եւ պայքարեցին հանուն արդարության ու ճշմարտության հաղթանակի:

Այդ պայքարը վսեմ էր, առավել սուրբ ու սրբազան, քան հազարավոր զոհաբերությունները. Արածանիի ափին զոհաբերվում էին քրիստոնյա հայի աստվածասեր կյանքն ու ջերմեռանդ հոգին: Պատմության էջերում կարմիրով գրված այդ փառապանծ դրվագը վկայությունն ու օրինակն է աստվածային այն սիրո, որը մեր Տեր Հիսուս Քրիստոս պատվիրեց ունենալ մեր սրտում. «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Հովհ. ԺԵ 13):

Վարդանանց քաջերը սեփական կյանքը չխնայեցին եւ հանուն Քրիստոսի, հանուն իրենց մայրերի ու քույրերի նահատակվեցին, եւ թեպետ նրանց հողե մարմինները հողին դարձան, սակայն արիների հրե հոգիները երկինք համբարձվեցին՝ իրենց քաջ Զորապետի՝ Հիսուս Քրիստոսի երկնային բազմաբյուր զորքը համալրելով ավետարանական սերմի օրինակով. «Եթե ցորենի հատիկը հողի մեջ ընկնելով չմեռնի, միայն հատիկն ինքը կմնա, իսկ եթե մեռնի, բազում արդյունք կտա» (Հովհ. ԺԲ 24):

Վարդանը, Գարեգինը, Արտակը, Խորենն ու նրանց մյուս զինակիցներն իրենց սխրանքով խոստովանեցին, դավանեցին եւ միաժամանակ քարոզեցին ինքնաուրաց այն սերը, որ չի հապաղում բարին գործել, որ չի հանդուրժում ուրացությունն ու նախընտրում է քաջաբար մեռնել, քան ապրել վախկոտի նման:

Հավատը, հիրավի, հեռու է վանում ամեն վախ ու կասկած, ուստի հայոց աներկյուղ

քաջերն իսկապես հավատացյալն ու առաքյալն էին Քրիստոսի՝ Նրա սիրո քարոզիչներն ու վկաները: «Մեծ է սերն Աստծու»,— ասում է Եղիշեն՝ Ավարայրի երգիչը,— ավելի մեծ, քան բոլոր երկրավոր մեծությունները: Այն մարդկանց աներկյուղ է դարձնում անմարմին հրեշտակների զորքի նման: Իսկ ում հոգին թուլացած է երկնավոր առաքինությունից, սաստիկ երկյուղի մեջ է նրա մարմնի բնությունը. ամեն հողմից շարժվում, ամեն խոսքից վրդովվում եւ ամեն բանից դողում է:

451 թվականի մայիսյան հերոսամարտը քրիստոնյա հայի սխրանքն էր. նրան էր վիճակվել եւս մեկ անգամ խոստովանել ու իր ժամանակավոր մահվամբ եւ հավիտենական կյանքի փափագով վկայել, որ հայկականությունն ու քրիստոնեությունն այլեւս մեկ միասնություն են: Վարդանանց տոնը, որը նվիրված է 451 թվականի մայիսի 26-ին Ավարայրի ճակատամարտում զոհված Սուրբ Վարդան զորավարի եւ 1036 քաջարի վկաների հիշատակին եւ հայոց ազգային ու եկեղեցական մեծագույն տոներից է, կարծես երբեք էլ միայն հեռավոր հիշողություն չի եղել, այլ մշտապես խոսուն եւ արդիական է բոլոր ժամանակներում հայ ժողովրդին պատուհասած դժբախտությունների հաղթահարման ճանապարհին:

Տոնի հիմքը ոսկեդարյան վարդաններ ի հերոսագործությունն է՝ անցավորից դեպի անանցն ու հավիտենականը ճախրելու նրանց սխրանքը, ինչը լավագույնս նկարագրում է դեպքերի ժամանակակից եւ ականատես Եղիշեն: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու տոնելի սրբերի շարքին դասված «հայրենիքի սուրբ նահատակները», մինչեւ մարտի բովի մեջ մտնելը, «սեղան կանգնեցնելով՝ ամենասուրբ խորհուրդը կատարեցին, պատրաստեցին նաեւ ավազան, եւ եթե զորքի բազմության մեջ չմկրտված մարդ կար, ամբողջ գիշերը մկրտեցին. եւ առավոտյան Սուրբ հաղորդություն ընդունեցին»,— վկայում է պատմիչը:

Հայրենանվեր եւ աստվածասեր քաջ հայորդու ամենավառ օրինակը Սուրբ Վարդանն էր, որն այդ պայքարում Աստծուն եւ հայրենիքին ընծայաբերեց նաեւ իր սիրասուն որդուն: Վարդանն առաջինը հենց իր զավակին թշնամու դեմ մարտի ուղարկեց. նրա պատանի որդին՝ հորից ժառանգած խիզախությամբ լեցուն, հերոսաբար պայքարի դուրս ելավ: Սա տեսնելով՝ մարտիկները միմյանց խրախուսում էին, քաջալերում՝ հանուն հավիտենական կյանքի իրենց այս ժամանակավոր կյանքն Աստծուն ընծայաբերելով:

Սրբոց Վարդանանց փառավոր հիշատակը տոնախմբելով՝ մենք՝ հայերս, փորձում ենք արժանին մատուցել մեր զորավոր նահատակներին եւ նրանց անձնազոհությունը մեզ համար օրինակ ենք դարձնում: Ահավասիկ դարեր են անցել, սակայն նրանց սխրանքը դեռ ապրեցնում է մի ամբողջ ժողովրդի, որի երակներում Վարդանանց բոսորագույն արյունն է հոսում: Քրիստոնեությունը հայի համար հանդերձանք չէ, որ կարելի է հանել եւ դեն նետել, այլ՝ մաշ-



կի գույն, արյուն եւ կյանք, որից երբեք չեն հրաժարվում:

Վարդանանց քաջերի այդ նույն արյունն է հոսում գոյության ողջ ընթացքում զանազան դժվարությունների առերեսված հայ ժողովրդի քաջորդիների երակներում՝ Ավարայրից մինչեւ Սարդարապատ ու Արցախ: Այդ նույն ոգին էր թեւածում հայոց երկնքում նաեւ ապրիլյան պատերազմի օրերին, նենգ թշնամու սանձազերծած վերջին արհավիրքի ժամանակ, երբ մեր հայորդիներն իրենց կյանքը նվիրաբերեցին հանուն հավատքի եւ սրբազան հայրենիքի:

Այսօր եւս հայ մայրերը վարդաններ են ծնում, եւ այսօր դարձյալ հայ քաջորդիների հայրերն ու մայրերը մարտի դաշտ են ճանապարհում իրենց զավակներին՝ ընծայաբերելով հանուն հայոց սրբազան հողի փրկության, հայոց հավատքի անսասանության:

Վարդանանց քաջերի սխրանքից հարյուրավոր տարիներ անց էլ նրանց գործն անմահ է, անմահ է եւ նրանց ոգին, որ թեւածում է Հայոց երկնքում: Մերօրյա Ավարայրը եւս այդ ոգու կենդանության ու հավիտենականության մասին է վկայում, մեր շարունակվող պայքարը նույնպես սխրանքների պատմություններ է թողնում դարերին՝ բարձրագոչ աղաղակելով՝ «մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»: Մերօրյա վարդանները եւս զոհվում են ավարայրներում՝ ամենաթանկն ընծայաբերելով: Իրենց կյանքը զոհաբերած հայ քաջորդիներին երկնքում ընդառաջ են ելնում նույն Վարդանանց քաջերը՝ առաջնորդելով իրենց զավակներին դեպի Աստծու՝ Բարձրյալի արքայություն, որտեղ թագավորում է խաղաղությունը, իշխում է սերը, եւ հաղթում՝ արդարությունը:

Ուրեմն թող մեր հոգին ջերմանա Վարդանանց քաջերի անսասանելի հավատքով, թող անցյալի ու մերօրյա Վարդանանց հերոսների ոգին միշտ վառ մնա, քաջալերի եւ հուսադրի, որպեսզի երբեւէ չերկնչենք անաստվածների բազմությունից եւ մեր արիությանը վախկոտություն ու ամեն տեսակի թուլակամություն չխառնենք, այլ անխոտոր եւ անդրդվելի քայլենք դեպի Ճշմարտությունը՝ դեպի մեր Տեր Հիսուս Քրիստոս՝ քաջ գիտակցելով, որ Փրկչի լուսեղեն պսակը պահված է հանուն հավատքի, արդարության եւ սրբության մարտնչողների համար...

ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Շարական Սրբոց Վարդանանց

Դորահրաշ պսակաւոր
եւ զօրագլուխ առաքինեաց,
Վառեցար զինու Հոգւոյն արիաբար
ընդդէմ մահու.
Վարդան քաջ նահատակ,
որ վանեցեր զթշնամին,
Վարդագոյն արեամբդ քո
պսակեցեր զեկեղեցի:

Երկնաւոր Թագաւորին զինու
յաղթեալ պատերազմին,
Խոհական իմաստութեամբ
խոհեմացեալ անճառապէս.
Խորէն խորհրդական եւ
ծանուցեալ անուն բարի,
Խաչելոյն վկայ եղեալ հեղմամբ
արեան պսակեցաւ:

Բենական լուսով լցեալ
արիացեալն քաջն Արտակ,
Թաթաւեալ ի կարմրութիւն
բոսորային բղխեալ աղբերն.
Զփրկականն ըմպեալ զբաժակ
եւ մկրտեալ արեամբն իւրով,
Դասակցեալ ընդ անմարմնոցն
Երրորդութեանն երգել զփառս:

Սրբափայլ զգեստուք պճնեալ
ի յերկնաւոր հանդիսադրէն,
Երրորդութեամբն զօրացեալ
վանեալ զամուրս բանսարկուին.
Հմայեակ, Հօր ընծայեալ
Որդւոյ գոլով չարչարակից,
Հոգւովն յաղթեալ պատերազմին
եւ չարասէր թագաւորին:

Էական բարւոյն դիտմամբ ընդդէմ
մեղացն վառեցաւ,
Տարագնաց ելիւք յերկինս
պարակցեալ ընդ անմարմնոցն.
Տաճատ զարմանալի տաճար
եղեալ Երրորդութեանն,
Տէրունեան սուրբ խորհրդոյն
տուն եւ տեղի արժանացեալ:

Ստացեալ զհաւատոյ վահան, յուսոյն
զրահիւք ծածկեալ,
Զփրկականն սաղաւարտ ի գլուխ
եդեալ զնշան Խաչին,
Վահան վեհ երեւեալ,
որ մանկութեամբ նահատակեալ,
Խաչելոյն վկայ եղեալ պսակեցաւ
արեամբն իւրով.....

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գեւորգ Ե Սուրենյանցի ազգանվեր գործունեությունը

Սկիզբը՝ 2023-ի թիվ 2–3

Խորհրդային առաջին տասնամյակի ընթացքում նշանակալի իրադարձություններ տեղի ունեցան: Գեւորգ Ե Սուրենյանցը դիմում է Սփյուռքի՝ Ս. Էջմիածնի ենթակայության տակ գտնվող բոլոր թեմերին եւ նյութական օգնություն խնդրում հայկական գավառներում բարեկարգություններ կատարելու, ժողովրդին սննդամթերք բաժանելու եւ որբերի կարիքները հոգալու համար: 1923 թ. դեկտեմբերի 4-ին հաստատվում է նոր տոմարը: Նույն ժամանակահատվածում արտոնվում է երգեհոնի գործածությունը եկեղեցիներում (*Ա. Արզումանյան*, Դարավոր գոյամարտ, Երեւան, 1989, էջ 281): Գեւորգ Ե կաթողիկոսը, ճարտարապետներ Թորոս Թորամանյանը եւ Ալեքսանդր Թամանյանը ձեռնամուխ են լինում Մայր տաճարի հարավային գմբեթի վերականգնմանը:

Այս ժամանակահատվածում ստեղծվում են մարմիններ, որոնց նպատակը Հայ Եկեղեցու միաբանությունը պառակտելն էր. օրինակ՝ «Ազատ եկեղեցի», «Ազատ եկեղեցական եղբայրություն» կազմակերպությունները, որոնք ամեն կերպ ջանում էին խարխլել Եկեղեցու նվիրապետությունը եւ Ս. Էջմիածնի հեղինակությունը: Հարկ է նշել, որ Գեւորգ Ե Սուրենյանցը վերոնշյալ կազմակերպությունների վերաբերյալ հատուկ կոնդակ է հրապարակում՝ դատապարտելով նրանց գործունեությունը եւ նզովելով (*Ս. Ստեփանյան*, Հայ Առաքելական Եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երեւան, 1994, էջ 47):

1924 թ. հունվարի 1-ի կոնդակով Գեւորգ Ե Սուրենյանցը հռչակում է Գերագույն հոգեւոր խորհրդի ստեղծումը («Նշանավոր ճեմարանականներ», Ս. Էջմիածին, 2009, էջ 78): Մի քանի նիստ գումարելուց հետո՝ 1925 թ. հոկտեմբերի 22-ին, հատուկ կոնդակով հրավիրվում է համազգային ժողով: Նշանակվում են «Ազգային-եկեղեցական ժողովի իրաւասու անդամները, որոնք են Գերագոյն հոգեւոր խորհրդի անդամները, թեմական առաջնորդները եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր եպիսկոպոսները» (*Զարեհ քհնյ. Ազնաւուրեան*, Ազգապատում, հտ. 4, գիրք Ա, Նիւ Եորք, 1995, էջ 303). քննարկման նյութ են դառնում «Պոլոժենիե»-ի դադարեցման, Հոգեւոր խորհրդի ստեղծման, թեմական առաջնորդների ընտրության եւ օրակարգային այլ հարցեր: Ժողովի քննարկումներն արձանագրող փաստաթուղթը բաղկացած է 3 գլխից եւ 25 հոդվածից:

1926 թ. հրավիրվում է միջեկեղեցական համագումար, որի աշխատանքներին պետք է մասնակցեին նաեւ Հայ Եկեղեցու ներկայացուցիչներ: Հայ պատվիրակների ներկայությունը սույն համագումարին առավելապես քննարկումներին ծանոթանալու միտում ուներ: Միջեկեղեցական համագումարին մասնակցելու համար կազմվել էր մի հանձնաժողով, որի ղեկավարն էր Ամերիկայի թեմական առաջնորդ Տիրայր արք. Տեր-Հովհաննիսյանը (տես *Զարեհ քհնյ. Ազնաւուրեան*, Ազգապատում, հտ. 4, գիրք Ա, էջ 317):

Հայոց հայրապետը թե՛ կոնդակներով, թե՛ նամակներով անհատապես քաջալերում էր հայ եկեղեցականների ազգօգուտ գործունեությունը. բազմաթիվ գրավոր տեղեկությունների համաձայն՝ նա հանձնարարում է թեմական եպիսկոպոսներին վանքեր կառուցել, հանգանակություններ կազմակերպել, ժողովրդին համախմբել եւ այլն: 1930 թ. ապրիլի 16-ից Գեւորգ Ե Սուրենյանցն արդեն տկար էր զգում. չնայած դրան՝ նա նախագահում է այդ տարվա Ս. Հարության տոնակատարությունները: Ապրիլի 28-ին Հայոց հայրապետը դեռեւս զբաղվում էր ընթացիկ գործերով, երբ Գերագույն խորհրդի հաղորդմամբ տեղեկացավ Երուսաղեմի պատրիարք Եղիշե Դուրյանի մահվան մասին. «Անկարող եղաւ անկողնից վեր կենալ» (տես *Զարեհ քհնյ. Ազնաւուրեան*, նշվ. աշխ., էջ 374): Մայիսի 7-ի գիշերը Վեհափառ Հայրապետն իր մոտ է կանչում միաբանությանը եւ օրհնում: Գեւորգ Ե Սուրենյանցն ի Տեր հանգավ 1930 թ. մայիսի 8-ին՝ 83 տարեկան հասակում («Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք ԺԳ, կազմ.՝ Ս. Բեհբուդյան, Երեւան, էջ 698–699):

1912–1918 թթ. Հայ Եկեղեցու համար խիստ դժվարին եւ պատասխանատու ժամանակաշրջան էին: Այս տարիներին է նահատակների արյամբ ողողվում Հայոց հողը, եւ հայ ժողովուրդը հույս ու փրկություն ակնկալում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուց: Հայ հոգեւորականն այդ օրերին եւ քարոզիչ էր, եւ ուսուցիչ, եւ զինվոր, եւ քաղաքական գործիչ, եւ դիվանագետ...

Գեւորգ Ե Սուրենյանցի ջանքերով ստեղծվում են նաեւ եղբայրասիրական հիմնադրամներ: Հայոց հայրապետի ազգանվեր գործունեության շնորհիվ եկեղեցին կարողանում է անհրաժեշտ օգնություն ցուցաբերել Մեծ եղեռնից մազապուրծ շուրջ 30 000 հայի, եւ սա այն պայմաններում, երբ ցարական կառավարությունը Հայ Եկեղեցին թուլացնելու հետեւողական քաղաքականություն էր վարում, հալածում եւ աքսորում հոգեւորականներին: Նշենք նաեւ, որ Գեւորգ Ե Սուրենյանցի հովվապետության տարիներին Հայկական հարցը միջազգային տարբեր ատյաններում բարձրացնելու փորձ է կատարվում: Նրա անմիջական նախաձեռնությամբ կազմվում են պատվիրակություններ հստակ կանոնակարգով, գործունեության հատուկ ոճով եւ նպատակով:

Այսպիսով՝ Գեւորգ Ե Սուրենյանցի տոկուն կամքի եւ անխուճապ գործունեության շնորհիվ լուծվում են տվյալ ժամանակաշրջանում հայ ազգի առջեւ ծառացած բազմաթիվ՝ անվտանգային, սոցիալական, եկեղեցական-վարչական, մշակութային-կրթական խնդիրներ:

Գեւորգ Ե Սուրենյանցի կյանքի ընթացքն անխոս պատվիրան է յուրաքանչյուր հայ քրիստոնյայի համար, քանզի նա սեփական օրինակով ցույց տվեց, թե ինչպես է պետք ի գործ դնել Քրիստոսի սիրո պատգամները:

Մարիամ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հայ Եկեղեցու՝ Սուչավայի եւ Կամենեցի կուսանոցները



Հայ Եկեղեցու կուսանոցների մասին հայրենի պատմագրությունն առանձնապես պերճախոս չէ, իսկ հաճախ նաեւ լուռ է: Այս բացը երբեմն լրացնում են օտար աղբյուրները:

Այսպես՝ ԺԹ դարի երկրորդ կեսին հրապարակված լատիներեն մի արձանագրություն՝ թվագրված 1693-ով, փաստում է, որ Հայ Եկեղեցու կուսանոց գործել է նաեւ երբեմնի ծաղկուն հայկական գաղթօջախներից մեկում՝ Սուչավայի հռչակավոր Հաճկատար վանքում:

Նշված արձանագրությանը ծանոթանում ենք պատմաբան Դեմետրիոս Դանի աշխատությունում. «Սուչաւայի հարաւային կողմը, քառորդ մղոն հեռու կայ հայ կուսաստան մը, որուն եկամուտքէն խաղաղութեան ժամանակ 40 կոյս եւ այրի ի միասին մէջը կապրին: Ամենքը կապրին ըստ հին սովորութեանց՝ առանց պարտաւորիչ կանոն կամ իրական ուխտ ունենալու, բայց ամենայն ջերմեռանդութեամբ եւ համեստութեամբ» (*Դեմետրիոս Տան*, Արեւելեան Հայք ի Պուքովինա, թարգմ.՝ հայր Գրիգորիս Գալէմքեարեանի, Վիեննա, 1891, էջ 38):

Ի դարի ռումինահայ գրող Հակոբ Սիրունին նույն տեղեկությունը քաղել է Շմիդտի՝ Սուչավայի պատմությանը նվիրված գերմաներեն աշխատությունից: Այստեղ եւս բերված է լատիներեն նույն արձանագրությունը, որտեղ հիշատակվում են Սուչավայի հայկական չորս եկեղեցիներն ու

Կամենեցի Ս. Նիկողայոս եկեղեցին

երկու վանքերը՝ Զամկան՝ իբրեւ առաջնորդանիստ, Հաճկատարը՝ իբրեւ կուսանաց վանք (*Սիրունի,* Հայ Եկեղեցին ռումեն հողի վրա, Ս. Էջմիածին, 1966, էջ 100):

Մեր ժամանակներում արդեն Հեթում քհն. Թարվերդյանը, որն իր հոգեւոր ծառայությունն է բերել Ռումինիայի հայոց թեմում, ի լրումն այս ամենի՝ հայտնում է Հաճկատարի բակում միանձնուհիների շիրիմների առկայության մասին, ցավոք, առանց որեւէ արձանագրության:

Հեթում քհն. Թարվերդյանը նշում է. «Հաճկատարը ժամանակին եղել է կուսանաց անապատ, իսկ Զամկան՝ տղամարդկանց մենաստան, եւ Հաճկատարի բակում գտնվում են շիրիմները մի քանի միանձնուհիների, որոնց շուրջը եւս ուխտագնացությունների օրերին մոմեր են վառվում, իսկ տապանաքարերը պատում են մետաղադրամներով» (*Հեթում քհն. Թարվերդյան*, Սուչավայի հայկական հրաշքը, «Էջմիածին», 2014, Դ, էջ 129):

Հաճկատարի կուսանոցի մասին այլ տեղեկություններ չկան: Երբ, ինչպես եւ ով է հիմնել հիշատակված կուսանոցը՝ լատինական միակ աղբյուրը լռում է: ➥ *էջ 8*

ԴՄԻՏՐԻ ԼԻԽԱՉՈՎ

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ 2022-ի թիվ 19 – 2023-ի թիվ 1–3

Նամակ քսանհինգերորդ
ԽՂՃԻ ԹԵԼԱԴՐԱՆՔՈՎ

Լավագույն վարքագիծն այն է, որը սահմանվում է ոչ թե արտաքին հանձնարարություններով, այլ հոգեկան անհրաժեշտությամբ: Հոգեկան անհրաժեշտությունը, թերեւս, առանձնապես լավ է, երբ անգիտակցորեն է: Ճիշտ գործել անհրաժեշտ է առանց մտածելու, առանց երկար խորհրդածելու: Լավ վարվելու, մարդկանց բարիք գործելու չգիտակցված հոգեկան կարիքն ամենաարժեքավորն է մարդու մեջ:

Այս հոգեկան կարիքը, սակայն, միշտ չէ, որ բնորոշ է մարդուն ի ծնե: Այն դաստիարակվում է մարդու մեջ եւ դաստիարակվում է հիմնականում իր իսկ կողմից՝ ճշմարտությամբ, բարությամբ ապրելու նրա վճռականությամբ:

Մենք սովորում ենք հեծանիվ վարել եւ սկզբում հետեւում ենք ընկերների որոշ պարզ խորհուրդներին. ղեկը թեքել այն կողմը, որ կողմն ընկնում ես: Իսկ շուտով վարում ենք՝ արդեն իսկ չմտածելով որեւէ կանոնի մասին ու ողջ կյանքում վարում ենք լավ եւ ազատ:

Իմ «նամակներում» ես նույնպես «հեծանիվ վարելու» պարզ կանոններ եմ խորհուրդ տալիս՝ ապրել ազնիվ, ճշմարտացի: Սակայն դա անհրաժեշտ է միայն սկզբի համար: Ապրել անհրաժեշտ է ներըմբռնողաբար՝ «խղճի թելադրանքով»՝ չտատանվելով միշտ ճիշտ լուծումներ գտնել՝ առանց գրքերի մեջ նայելու: Ապրելն ավելի դժվար է, քան հեծանիվ վարելը. այդ պատճառով իսկ անհրաժեշտ է լինում ավելի շատ խորհուրդներ տալ:

Բայց ահա թե ինչի վրա ուշադրություն դարձրեք: Երբ դուք նոր եք միայն սովորում հեծանիվ վարել, երբ մտածում եք՝ որ կողմը թեքվել, շատ ջանք եք գործադրում: Իսկ երբ սովորել եք եւ չեք մտածում, դուք գրեթե չեք հոգնում: Եվ ահա իմ խորհուրդը. սովորեք առանց մտորումների մեջ ընկնելու անմիջապես գտնել ճիշտ որոշումը. ապրելը դյուրին կդառնա:

Ուստի իմ «Նամակներ բարու մասին» երկը ձեզ անհրաժեշտ է լինելու միայն սկզբի համար: Իսկ հետո ապրեք ըստ բարու՝ չմտածելով «կանոնների» մասին, որոնք առկա են նամակներում: «Կանոնները» միայն ճանապարհի սկզբի համար են: Չգտեք ընթանալ բարու ճանապարհներով այնպես դյուրին եւ բնազդաբար, ինչպես քայլում եք առհասարակ: Շրջապատող աշխարհ անվանվող մեր գեղեցիկ այգու արահետներն ու ճանապարհներն այնքան դյուրին, այնքան հարմար են, հանդիպումներն այնտեղ այնքան հետաքրքիր են, եթե միայն «ելակետային տվյալները» ճիշտ եք ընտրել:

Այսպիսով՝ կարդալով մի կողմ դրեք իմ նամակները եւ ինքներդ ձեզ համար ճիշտ որոշումներ գտեք ու ձգտեք չսայթաքել, եւ որ բոլոր որոշումները բխեն ուղիղ սրտից:

Իսկ ես, հրաժեշտ տալով, ձեռքս կթափահարեմ ձեր հետեւից...

Նամակ քսանվեցերորդ
ՍՈՎՈՐԵՔ ՍՈՎՈՐԵԼ

Մենք թեւակոխում ենք մի դար, որում կրթությունը, գիտելիքը, մասնագիտական հմտությունները որոշիչ դեր են ունենալու մարդու ճակատագրում: Առանց գիտելիքի, ի դեպ՝ ավելի ու ավելի բարդացող, պարզապես անհնար կլինի աշխատել, օգտակար լինել, քանզի ֆիզիկական աշխատանքով կզբաղվեն մեքենաները, ռոբոտները: Նույնիսկ հաշվարկները կկատարվեն համակարգիչներով, ինչպես նաեւ գծագրերը, հաշվումները, հաշվետվությունները, պլանավորումները եւ այլն: Մարդը նոր գաղափարներ կառաջադրի, կմտածի այն մասին, ինչի մասին չի կարող մտածել մեքենան: Իսկ դրա համար առավել անհրաժեշտ կլինի մարդու ընդհանուր կրթվածությունը, նրա՝ նոր բան ստեղծելու կարողությունը եւ, իհարկե, բարոյական պատասխանատվությունը, որը մեքենան որեւէ կերպ չի կարող կրել: Նախորդող դարերի պարզ բարոյականությունն անվերջորեն կբարդանա գիտության դարում: Դա հասկանալի է:

Սա նշանակում է, որ մարդու վրա կընկնի ծանրագույն եւ բարդագույն խնդիր՝ լինել ոչ թե պարզապես մարդ, այլ գիտության մարդ, մարդ՝ բարոյապես պատասխանատու այն ամենի համար, ինչ տեղի է ունենում մեքենաների ու ռոբոտների դարաշրջանում: Ընդհանուր կրթությունը կարող է ստեղծել ապագայի մարդուն՝ ստեղծագործող մարդուն, ողջ նորի ստեղծողին եւ բարոյապես պատասխանատուին այն ամենի համար, ինչ որ կստեղծվի:

Սովորելն այն է, ինչն այժմ անհրաժեշտ է երիտասարդին՝ խիստ վաղ տարիքից սկսած: Միշտ է անհրաժեշտ սովորել: Բոլոր նշանավոր գիտնականները մինչեւ իրենց կյանքի վերջը ոչ միայն սովորեցրել, այլ նաեւ սովորել են: Դադարես սովորել, չես կարողանա նաեւ սովորեցնել: Քանզի գիտելիքները մշտապես ավելանում եւ բարդանում են: Այդ ամենով հանդերձ՝ անհրաժեշտ է հիշել, որ սովորելու համար ամենաբարենպաստ ժամանակը երիտասարդությունն է: Հենց երիտասարդության, մանկության, պատանեկության, դեռահասության ժամանակ է մարդու միտքն առավել դյուրընկալ: Դյուրընկալ՝ լեզուներ (որը չափազանց կարեւոր է), մաթեմատիկա սովորելու համար, պարզ գիտելիքների յուրացման եւ գեղագիտական զարգացման համար՝ կանգնած բարոյական զարգացման կողքին եւ մասամբ այն խթանող:

Կարողացեք ժամանակ չվատնել դատարկ բաների՝ «հանգստի» վրա, որը երբեմն ավելի շատ է հոգնեցնում, քան ամենածանր աշխատանքը, մի՛ լցրեք ձեր լուսավոր միտքը հիմար եւ աննպատակ «տեղեկությունների» պղտոր հեղեղով: Խնայեք ձեզ սովորելու, գիտելիքներ եւ հմտություններ ձեռք բերելու համար, որոնք միայն երիտասարդության ժամանակ դյուրին եւ արագ կյուրացնեք:

Եվ ահա ես լսում եմ երիտասարդի ծանր հառաչը. ինչպիսի ձանձրալի կյանք եք առաջարկում մեզ՝ երիտասարդությանը: Միայն սովորել: Իսկ ո՞ւր մնացին հանգստանալը, ժամանցը: Ի՞նչ է, չուրախանա՞նք:

Իհարկե ո՛չ: Հմտությունների եւ գիտելիքների ձեռքբերումը հենց նույն մարզումն է: Սովորելը դժվար է, երբ չենք կարողանում դրա մեջ ուրախություն գտնել: Պետք է սիրել սովորելը եւ ընտրել հանգստի ու ժամանցի խելամիտ ձեւեր՝ նաեւ ինչ-որ բան սովորելու հնարավորություն տվող, մեր մեջ որոշ կարողություններ զարգացնող, որոնք անհրաժեշտ կլինեն կյանքում:

Իսկ եթե դուր չի գալիս սովորելը: Չի կարող այդպես լինել: Նշանակում է՝ դուք պարզապես չեք հայտնաբերել այն ուրախությունը, որը երեխային, պատանուն, աղջկան պատճառում է գիտելիքների եւ հմտությունների ձեռքբերումը:

Նայե՛ք փոքրիկ երեխային, ինչ հաճույքով է նա սկսում սովորել քայլել, խոսել, փորփրել զանազան սարքավորումներ (տղաների դեպքում), խնամել տիկնիկներին (աղջիկների պարագայում): Չգտեք շարունակել նոր բաներ յուրացնելու այս ուրախությունը: Սա մեծավ մասամբ կախված է հենց ձեզանից: Մի՛ դատարկաբանեք՝ չեմ սիրում սովորել: Իսկ դուք փորձեք սիրել բոլոր առարկաները, որոնք ուսումնասիրում եք դպրոցում: Եթե այլ մարդկանց դրանք դուր են եկել, ապա ինչո՞ւ ձեզ չեն կարող դուր գալ: Ընթերցեք արժեքավոր, ոչ թե պարզապես դատարկ գրքեր: Ուսումնասիրեք պատմություն եւ գրականություն. կիրթ մարդը պետք է լավ իմանա թե՛ մեկը եւ թե՛ մյուսը: Հենց դրանք են մարդուն տալիս բարոյական եւ գեղագիտական մտահորիզոն, շրջապատող աշխարհը դարձնում մեծ, հետաքրքիր, փորձառություն եւ ուրախություն ճառագող: Եթե ձեզ ինչ-որ մի առարկայի հետ կապված որեւէ բան դուր չի գալիս, ուժերը լարեք եւ ջանացեք դրա մեջ գտնել ուրախության աղբյուր՝ նորը ձեռք բերելու ուրախությունը:

Սովորե՛ք սիրել սովորելը:

Նամակ քսանյոթերորդ
ՉՈՐՐՈՐԴ ՉԱՓՈՒՄ

Անցյալի հիշողությունն ու գիտելիքները լցնում են աշխարհը, այն դարձնում հետաքրքիր, նշանակալից, ոգեշունչ: Եթե ձեզ շրջապատող աշխարհի հետեւում չեք տեսնում նրա անցյալը, այն ձեզ համար դատարկ է: Ձեզ համար ձանձրալի, թախծալի է, եւ դուք ի վերջո միայնակ եք, քանզի ձեզ համար ընկերներն էլ իսկական ընկերներ են, երբ ձեզ նրանց հետ կապում է ինչ-որ ընդհանուր անցյալ. ավարտել եք դպրոցը, ինստիտուտը կամ միասին եք աշխատել, իսկ ծերերն առանձնակի քնքշությամբ են հիշում նրանց, որոնց հետ միասին մարտնչել են, որոշ դժվարություններ հաղթահարել:

Թո՛ղ տները, որոնց կողքով անցնում ենք, թո՛ղ քաղաքներն ու գյուղերը, որտեղ ապրում ենք, թո՛ղ նույնիսկ այն գործարանը, որտեղ աշխատում ենք, կամ նավերը, որոնցով լողում ենք, լինեն մեզ համար կենդանի, այսինքն՝ անցյալ ունեցող: Կյանքը գոյության մի ակնթարթ չէ:

Եկեք իմանանք պատմությունը, պատմությունն այն ամենի, ինչը մեզ շրջապատում է մեծ եւ փոքր ընդգրկումներով: Չէ՞ որ դա աշխարհի չորրորդ՝ շատ կարեւոր չափումն է:

Սակայն մենք ոչ միայն պետք է իմանանք պատմությունն այն ամենի, ինչը շրջապատում է մեզ՝ սկսած մեր ընտանիքից, շարունակելով գյուղով կամ քաղաքով եւ վերջացրած երկրով կամ աշխարհով, այլ նաեւ պետք է պահպանենք այդ պատմությունը՝ շրջապատի այս անչափելի խորությունը:

Ուշադրություն դարձրեք. երեխաներն ու երիտասարդներն առանձնապես սիրում են սովորույթները, ավանդական տոնակատարությունները, որովհետեւ նրանք յուրացնում են աշխարհը՝ յուրացնում են այն ավանդույթների, պատմության միջոցով: Եկեք առավել գործուն պաշտպանենք այն ամենը, ինչը մեր կյանքը դարձնում է իմաստավորված, հարուստ եւ ոգեշունչ:

Նամակ քսանութերորդ
ԼԻՆԵՆՔ ՄԻԱՍԻՆ

Հաճախ են ինձ հարցնում, թե ինչու են կենցաղում ռուսական խաղերը լիովին անհետանում: Լապտա, գորելկի, գորոդկի կամ ռյուխի:

Բարդ խնդիր է: Անհետանում են ոչ միայն ռուսական խաղերը, անհետանում են խաղերն ընդհանրապես: Դրանք փոխարինվում են պարերով կամ նրանով, ինչը կոչվում է պար: Այնինչ խաղերը շատ կարեւոր են դաստիարակչական առումով: Խաղը՝ լինի դա լապտա, ձեռնագնդախաղ, գորելկի կամ ինչ-որ այլ բան, դաստիարակում է ընկերայնություն (սոցիալականություն), այն դաստիարակում է միասնական լինելու, միասին խաղալու, խաղընկերոջը, հակառակորդին զգալու կարողությունը: Խաղը դաստիարակչական շատ կարեւոր երեւույթ է: Մեր կյանքում խաղերը պետք է վերակենդանացվեն: Քանզի այլեւս չեմ տեսնում, որ խաղան, ասենք, կրոկետ: Իսկ կրոկետը կարեւոր խաղ է, որովհետեւ կրոկետ են խաղում ե՛ւ մեծահասակները, ե՛ւ երեխաները, սա շփում է մեծերի եւ երեխաների միջեւ: Դա կարեւոր է: Տանը զբաղված են հեռուստացույց դիտելով: Ահա այստեղ է երեւում, որ հեռուստացույցը լուրջ մրցակից է: Իսկ առաջ խաղում էին թվային լոտո, խաղում էին երեխաները, խաղում էին մեծերը, եւ դա ծառայում էր մեծահասակների եւ փոքրերի միջեւ շփմանը, դա դաստիարակության առումով շատ կարեւոր իրողություններից էր: Ոչ միայն լոտո, կային տարբեր խաղեր, որոնց մասնակցում էր ողջ ընտանիքը: Ճիշտ այնպես, ինչպես, ասենք, Հյուսիսում՝ ինչ-որ մի տեղ, ողջ ընտանիքը մասնակցում էր ժողովրդական խմբային երգերի կատարմանը: Սա կարեւոր հանգամանք է, քանի որ երգչախումբը ոչ միայն գեղագիտական հաճույք է պատճառում, այլ նաեւ բարոյապես համախմբում է ընտանիքը, բարոյապես համախմբում է հասարակությունը՝ հավաքված ինչ-որ մի տեղ՝ գյուղում, ձմռանը՝ ձյունամրրիկի ժամանակ: Երգում են՝ մարդիկ այս ձեւով շփվում են միմյանց հետ, նրանք հաղորդակցվում են: Իսկ այժմ որքան քիչ է շփումը մարդկանց միջեւ: Շատ կարեւոր են դրանք՝ անմիջական շփումները, ինչ-որ ներըմբռնողական շփումները, որոնք հենց խաղերի, հենց երգերի խմբային կատարման, երաժշտության մեջ են ձեւավորվել: Ուստի կրթական կազմակերպությունների ուշադրությունը պետք է հրավիրել մեր կենցաղի այս կողմի՝ այն հանգամանքի վրա, որ մեր առօրյայից չքանում են խաղերը: Իսկ արդյո՞ք մեր դպրոցներում չդարձնենք մարմնամարզության դասերը խաղային: Սա միաժամանակ կնպաստեր ե՛ւ մարմնական, ե՛ւ բարոյական զարգացմանը, ե՛ւ կմիավորեր դասարանը:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը՝
Տ. Անդրեաս վրդ. ԵՋԵԿՅԱՆԻ

← էջ 6

Ու թեեւ Սիրունին, որոշ թերահավատությամբ, կարծում է, որ իբրեւ կուսանաց վանք հիշատակված Հաճկատարում «բառին ճշգրիտ իմաստով մայրապետներ կամ քույրեր պետք չէ եղած ըլլան հոն», այսուհանդերձ, չպետք է բացառել լատինական գրության իսկությունը: Հատկապես, որ ԺԷ դարը Հայ Եկեղեցում հայտնի է իբրեւ կուսանոցների վերարթնացման ժամանակաշրջան:

Նկատենք, սակայն, որ բոլոր այս հիշատակումներում բաց է մնում Հաճկատարի կուսանոցի պատկանելության հարցը:

Արդյո՞ք այն պատկանել է Հայ Եկեղեցուն, թե՞ եղել է կաթոլիկ մենաստան, հատկապես այն պարագայում, որ ԺԷ դարի կեսերից Արեւելյան Եվրոպայի գաղթօջախներում արդեն իսկ հայ բնակչության մի հատված սկսել էր հեռանալ Հայ Եկեղեցուց՝ ընդունելով կաթոլիկ դավանանք:

Հարցի պատասխանը կարելի է միանշանակ համարել:

Ներկայիս Ռումինիայի տարածքում գտնվող Սուչավան այն եզակի բնակավայրերից է, որտեղ ԺԳ դարից ի վեր հաստատված հայ համայնքը մշտապես հավատարիմ է մնացել Հայ Եկեղեցուն: Ավելորդ չէ նշել, որ Հաճկատարն իր պատմականությամբ այսօր եւս Ռումինիայի հայոց թեմի կարեւոր հոգեւոր կենտրոններից է: Այն շարունակում է մնալ որպես սրբազան ուխտատեղի ոչ միայն Արեւելյան Եվրոպայի հայության, այլեւ այլազգի մյուս քրիստոնյաների համար: Նման հանգամանքներում կարելի է պնդել, որ Սուչավայի Հաճկատար վանքում հիշատակված կուսանոցը պատկանել է Հայ Եկեղեցուն:

Արեւելյան Եվրոպայում Հայ Եկեղեցու մեկ այլ կուսանոց գործել է ներկայիս Ուկրաինայի Կամենեց-Պոդոլսկում:

«Կամենեց-Պոդոլսկում կար հայկական կուսանոց, որի համար 1600-ին Գրիգոր Վարագեցի եպիսկոպոսը կառուցել էր առանձին շինություն»,– կուսանոցի մասին համառոտ, սակայն արժեքավոր այս տեղեկությունը հաղորդում է պատմաբան Վարդան Գրիգորյանը («Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 5, էջ 202):

Թե երբ է հիմնվել այս կուսանոցը, պատմական աղբյուրները կրկին լուռ են:

Փոխարենը չափազանց ուշագրավ են ԺԷ դարի երկրորդ կեսին՝ Կամենեցում հայությանը պարտադրած դավանափոխության տարիներին, կուսանոցի հետ կապված իրադարձությունները, որ հայտնի են դառնում ԺԷ դարի կաթոլիկ քարոզիչ Ալոյիսիոսի (Լուի Մարի Պիդու), ինչպես նաեւ նույն դարաշրջանի անանուն կաթոլիկ հոգեւորականի հիշատակարաններից:

Նշենք, որ Կամենեց-Պոդոլսկը ԺԷ դարում պատկանում էր Լեհաստանին, որի հայ համայնքի համատարած կաթոլիկացմանն իր գործուն մասնակցությունն է ունեցել նաեւ Ալոյիսիոսը: Այս նպատակով նա 1666 թվականի օգոստոսին ժամանել է Կամենեց, իսկ նույն թվականի հոկտեմբերին էլ Կամենեցում մատուցվել է կաթոլիկ հայածես առաջին պատարագը:

Ինչպես Ալոյիսիոսը, այնպես եւ վերոնշյալ մյուս հիշատակագիրը, ներկայացնելով այդ իրադարձությունները, չեն շրջանցում նաեւ Կամենեցի հայոց կուսանոցը, որի Սեֆերովիչ անվամբ մայրապետը դեմ էր հայերի դավանափոխությանը եւ որի շնորհիվ էլ չի հաջողվել փակել կուսանոցը:

Թերեւս այս է պատճառը, որ զույգ հիշատակարաններում կաթոլիկ հոգեւորականները խիստ մռայլ գույներով են ներկայացնում հայոց կուսանոցը. «Են ի քաղաքն եւ միանձնուհիք հայոց 12, այլ անուամբ լոկով են նոքա միանձնուհիք, եւ յոյժ աննշան է խտիրն ընդ հանդերձս նոցա եւ ընդ կանանցն աշխարհականաց: Առանց կանոնաց կեան յընդարձակ տան միոջ եկեղեցւոյն. երիցս անգամ կամ չորիցս խոստովանին ի տարին, եւ ի պատճառս անառակ վարուց իւրեանց եւ հաղորդութեանց եւ տրոց եւ առից՝ գայթակղութեանց լինին առիթք»,– գրում է Ալոյիսիոսը («Բռնի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ», Ս. Պետերբուրգ, 1884, էջ 13):

Ալոյիսիոսն անբարեհաճ է կուսանոցի մայրապետի, որ համառում էր մնալ իր հավատքին, եւ խիստ բարեհաճ՝ կուսանոցի անկարգությունից տրտնջացող Մարիամ անվամբ կույսի նկատմամբ: Վերջինս, որ եղել էր Հայաստանում, Սուրբ վայրերում, Իտալիայում եւ տիրապետում էր մի քանի լեզվի, Ալոյիսիոսի հետ ծածուկ զրույցներում եւս դժգոհում է իր ընկերուհիների անկանոն եւ անկարգ վարքից:

Ահա այս տրտունջն առիթ է դառնում, որ հրավիրվի եպիսկոպոս, եւ քննություն կատարվի կուսանոցում. «....վասն այսորիկ յորդոր եղէ առ արքեպիսկոպոսն, որպէս զի երթիցէ եւ յայց ելանիցէ նմա եւ ըստ կարի իւրում աշխատ լիցի անհետ առնել զանկարգութիւնսն, որ սպրդէին առհասարակ ի ներքս ի վարս կանանց միայնակեցից, մանաւանդ եթէ չիցեն կանոնք կամ տեսուչք, որպէս առ նոսա» («Բռնի միութիւն....», էջ 82):

Ըստ Ալոյիսիոսի՝ արքեպիսկոպոսը կուսանոցում «ետես զվիճակն խառնիճաղանճ, յորում բնակէին, զկագ եւ զկռիւ, յորում տոգորեալ էին միանձունքն, եւ զայն՝ զի ըստ հրամանի աշխարհական եւ եթ իշխանութեան, իմա դատաւորացն՝ ընտրէին միանձունքն, առանց հրամանի կամ օրհնութեան եպիսկոպոսին կամ քահանայի. եւ յորժամ ըստ իմում խորհրդեան հանդերձեալ էր արձակել զամենեսեան ի տունս իւրաքանչիւր՝ եթէ ոչ ընկալցին զուղղութիւնսն եւ կանոնս միանձանց՝ ընդդէմ եկաց նմա մայրապետ վանացն, կին ոմն Սեֆերովիչ՝ զոքանչ աւագ դատաւորին Հայոց, յամառեալ ի հերետիկոսութեան» (անդ):

Այս առումով ուշագրավ են նաեւ անանուն հիշատակագրի գրառումները, որտեղ եւս ներկայացվում են կուսանոցում տիրող անկարգությունները, որոնց պատճառով էլ «կարգեցաւ քննութիւն եւ եղեւ հրաման սաստիկ՝ զի ցրուեսցին միանձնուհիքն եւ երթիցէ իւրաքանչիւր առ ծնողս իւր. այլ նոքա կացին մնացին անդէն, քանզի որ վանամայրն էր ուխտին, իբրեւ մատոյց առ այցելուն մատանի մի մեծագնի (որպէս պատմեաց հարցն այր ոմն) մեղկացաւ նա ի խստութենէն եւ տեղի ետ մրրիկն, թէպէտ եւ կարի հակառակեցաւ Ալոյիսիոս այնմ զօշաքաղութեան» («Բռնի միութիւն....», էջ 187):

Որքանով են անկողմնակալ եւ իրավացի հայոց կուսանոցի մասին նման վատաբանությունները, դժվար է ճշտել: Սակայն կարելի է գուշակել, որ Կամենեցի հայության դավանափոխության ճանապարհին անհրաժեշտ է համարվել նաեւ կուսանոցի կաթոլիկացումը, ինչը, սակայն, գոնե սկզբնական շրջանում, չի հաջողվել:

Այս իրադարձություններից մի քանի տարի անց՝ 1672 թվականին, երբ տաճկական զորքերը գրավում են Կամենեցը, հայերը հեռանում են քաղաքից, որոնց թվում՝ «14 մայրապետք կուսանք» (*Ք. վրդ. Քուշներեան*, Պատմութիւն գաղթականութեան Խրիմու հայոց, Վենետիկ 1895, էջ 200):

Արդյո՞ք նրանք՝ բոլորը, դեռեւս Հայ Եկեղեցու միանձնուհիներ էին, դժվար է ասել:

Համենայն դեպս կաթոլիկ վարդապետ Մինաս Բժշկյանը ԺԹ դարասկզբին, այցելելով Կամենեց, գրում է, որ քաղաքի Ս. Ավետման եկեղեցու շուրջ «կայ պարտէզ գեղեցիկ, առ որով տեսաք զաւերակս եւ զտեղիս սենեկաց, ուր ի հնումն բնակէին կուսանք բենեդիկտեան կարգին, որպէս գոյ յիլվով, որք ցրուեցան ի ժամանակս առման քաղաքին» (*Մ. Բժշկեան,* Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 152):

Կարելի է ենթադրել, որ Կաթոլիկ եկեղեցուն ի վերջո հաջողվել է դավանափոխ անել նաեւ կուսանոցի միանձնուհիներին, իսկ կուսանոցը վերակազմավորել իբրեւ բենեդիկտյան ուխտի կուսանոց:

Անդրադառնալով Կամենեցի առման տարիներին՝ Ք. Քուշներյանը գրում է, որ արդեն 1676 թվականին «Կամենիցէն ելնող մայրապետաց թիւը երեքի հասած էր. զի նոցանէ երեքն հայոց լեզուն չգիտնալնուն պատճառաւ՝ բաժնուած էին ընկերներէն. եւ այլ հինգն՝ պանդխտութեան միջոց վախճանած» (*Ք. վրդ. Քուշներեան,* նշ. աշխ., էջ 200):

Ըստ Ք. Քուշներյանի՝ այս 3 միանձնուհիները 1676-ին ապաստան են գտնում Լվովում: Թերեւս հենց նրանք էլ շուրջ մեկ տասնամյակ անց դառնում են Լվովի՝ հայ կաթոլիկ կուսանոցի առաջին միանձնուհիները:

Այս իրադարձություններից շուրջ երեք հարյուրամյակ անց՝ ԺԹ դարում, Կամենեցի եւ Լվովի երբեմնի ծաղկուն հայ համայնքը տեսնում ենք ամբողջությամբ ուծացված, իսկ մայրենի լեզուն՝ փնտրված:

1883-ին Ք. Քուշներյանը, Կամենեցում մասնակցելով Ս. Աստվածածնի վերափոխման տոնին նվիրված ավանդական ուխտագնացությանը, կրկին հիշատակում է միանձնուհիների, որոնք թափորի առջեւից իրենց ուսերին տանում էին գահավորակի վրա ամփոփված Աստվածածնի հրաշագործ պատկերը: Մինչդեռ՝ «Կը տեսնայի աչացս առաջ փառաւորեալ Հայոց Եկեղեցի, Լուսաւորչի փառաւոր պատկերաւ, արձանով եւ արծաթապատ նշխարով զարդարուած. այլ այդ տաճարին մէջ եւ ոչ մի բառ հայերէն չէր հնչել, Լուսաւորչի լեզուն հասկցող չկար» (անդ, էջ 174):

Նույն պատկերն է տեսնում նաեւ Լվովի բենեդիկտյան ուխտի հայկական կուսանոց այցելած Մ. Ալթունյանը. «Հայ մը երբ այս կուսաստանէն ներս մտնէ, արիւնը կը սառի, մազերը կը ցցուին ու շունչը կսպառի, ինչու հոս պիտի տեսնէ 15 հայ օրիորդք եւ 11 ալ լեհ միանձնուհիք» («Տեղեկագրութիւն հայոց գաղթականութեան որք ի Մոլտո-Վալաքիա, Հունգարիա եւ ի Լեհաստան», Ուղեւորութիւն յամին 1876 Արշակայ Մ. Ալթունեան, Ֆօքշան, 1877, էջ 127):

Այս իրողությունից տագնապում է անգամ կուսանոցի հայ կաթոլիկ մայրապետը՝ գութերցի Կայեդանոս Սերգիսովիչը. «Մենք Հայու երկրէն եկած ենք, հոս կը կորինք, այս մենաստանին մէջ երկու մայրապետէն զատ հայերէն գիտցող չկայ, բայց Գրիգոր Լուսաւորչի շարականներն ամենուն պարտքն է, որ սովրին ու կարդան.... 11 լեհ մայրապետ, որ շարականը գոց գիտեն, ամի... բայց ինչ ընեմ, ես գիտեմ, որ մեր բուն հաւատքը այս չէ, մեր Հայու երկրին կրօնքը Գրիգոր Լուսաւորչինն է, մենք ալ հոս պիտի կորինք, եթէ ես մեռնիմ այս շարականներն ո՞վ պիտի կարդացնէ, եթէ ինէ ետքը օր մալ գլխաւոր վանամայրը լեհ ըլլայ, ո՞ւր կը մնայ այն ատէն շարականը, հայերէն ժամերգութիւնը»:

Մայրապետի՝ Մայր Եկեղեցու կարոտախտը, անշուշտ, ուշացած էր:

Հեղինե ՄԿՐՏՉՅԱՆ



Հաճկատար վանքը

Հայ Եկեղեցու՝ Սուչավայի եւ Կամենեցի կուսանոցները

Լվովի հայկական տաճարը

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ

ՄԱՐՏ

† Տոն Սուրբ Գրիգոր Լուսավորչի չարչարանքների եւ Խոր վիրապ մուտքի – *մարտի 25*

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Արփինե Չանթիկյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 3.03.2023 թ.
Տպաքանակը՝ 1225